Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Աստված աշխարհը զերծ պահի այնպիսի եղեռնագործություններից, որ տեսավ հայ ժողովուրդը անցյալ դարասկզբին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությանը, միջեկեղեցական հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԵԺԿ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրոպական խորհրդարանում Եւրոպական ժողովրդական կուսակցության խմբի փոխնախագահ Խայիմ Մայոր Օրեխային:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Եւրամիության կառույցների եւ ՀՀ իշխանությունների միջեւ ձեւավորված կապերի եւ համագործակցության առնչությամբ: Ապա անդրադարձ կատարվեց ներկայիս կյանքի մարտահրավերներին եւ դրանց լուծման ուղիներին: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը նշեց, որ համաշխարհայնացման գործընթացները, տարբեր օտարամուտ երեւույթներ խաթարում են հասարակության հոգեւոր առողջ ընկալումները եւ կյանքը, որ դարեր շարունակ խարսխված է եղել քրիստոնեական արժեքների վրա: Ամենայն Հայոց Հայրապետը հաստատեց, որ միայն ամուր հոգեւոր-բարոյական արժեհամակարգի ձեւավորմամբ հնարավոր կլինի հաղթահարել բոլոր տեսակի մարտահրավերներն ու դժվարությունները:

Իր հերթին Խ.Մ. Օրեխան խոսեց Եւրոպայում ավանդական արժեքների վերականգնման անհրաժեշտության մասին՝ նշելով, որ Քրիստոնեական Եկեղեցու հոգեւոր առաջնորդները մեծ դեր ունեն Եւրոպայի կյանքում քրիստոնեական արժեքները վերստին ներկայություն դարձնելու գործում: Այս առումով պրն. Օրեխան մեծապես կարեւորեց Եկեղեցիների միջեւ երկխոսությունը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ համայնքային կյանքի, քրիստոնեական դաստիարակության կարեւորության մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Եւրոպական խորհրդարանում Եւրոպական ժողովրդական կուսակցության խմբի փոխնախագահ Օրեխային՝ հոգեւոր-բարոյական արժեքների պաշտպանության եւ պահպանության գործում ցուցաբերած իր նախանձախնդրության եւ ջանքերի համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ